

ՀՀ ՎԱՐՁԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ
ԺԱՄԸ 17:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Կ. Ճշմարիտյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Խաչատրյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Հ. Մանուկյան	ՀՀ արդարադատության նախարար
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ա. Առաքելյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Վ. Նիկոյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

Հրավիրվածներ՝

Վ. Այվազյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Հ. Մարգարյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Վ. Միրումյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Մուսայան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ն. Դանիելյան	ՀՀ վարչապետի օգնական
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ք. Ղալեչյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան
Ռ. Թադանի	«Էջիս Ինտերնեյշնլ» ընկերության տարածաշրջանի փոխտնօրեն
Պ. Մորիս	«Էջիս Ինտերնեյշնլ» ընկերության աշխատանքային խմբի ղեկավար
Դ. Հովսեփյան	«Էջիս Ինտերնեյշնլ» ընկերության աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ
Լ. Գրիգորյան	թարգմանիչ

1. Կառավարման խորհրդի նախորդ հանձնարարականների կատարման մասին

(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանի զեկուցումը՝ ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում գյուղատընտեսական տեխնիկայի և ընտանի կենդանիների համար երկու՝ նոր վերգետնյա ուղեանցերի մանրամասն նախագծի պատրաստման աշխատանքների կատարման և առկա կամուրջների մասով աուդիտորական ուսումնասիրության և վերջնական նախագծերի պատրաստման ընթացքի մասին:

2) Հաստատել ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն և Բուրաստան համայնքների համար՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Երևան-Արտաշատ հատվածում գյուղատընտեսական տեխնիկայի և ընտանի կենդանիների համար նոր վերգետնյա երկու ուղեանցերի կառուցման տեխնիկական առաջադրանքը և ԱԶԲ հետ համաձայնեցնելուց հետո Խորհրդրատու «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ կնքված պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

2. Կապալառու «Կորսան Կորվիամ Կոնստրուկցյուն Էս. Ա.» ընկերության հետ ստորագրված Փոխըմբռնման համաձայնագրի հաստատման և No.T1-T2-CW-01 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ փոխհամաձայնության հուշագրով առաջարկվող պայմանագրի փոփոխություններին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝ համաձայնեցնելով ԱԶԲ-ի հետ՝ սահմանված կարգով պայմանագրում կատարել փոխհամաձայնության հուշագրից բխող փոփոխություններ:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի հարավային հատվածի ծրագծի հաստատման վերաբերյալ

(Արթուր Սարգսյան, Գագիկ Բեգլարյան, Կարեն Ճշմարիտյան, Հովիկ Աբրահամյան)

5. **Քննարկումներից հետո որոշվեց՝** Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի հարավային հատվածի ծրագծի տարբերակ Ա-1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ